


Երկնքի ճամբորդութեան կըպատրաստէր . Եւ առա յանկարծ ջորս կողմէն այս ցնծալից ձայնը միայն լսելի եղաւ .

— Երկիր , Երկիր :

Զոր ոչ ոք կրցեր էր գուշակել , եւ Քոյոմպոսի հանձարը համարձակեր էր յուսալու , նորածագ արեւուն ճառագայթներովը լուսաւորուածկերեւար . Եւ նաւաստիք այն մեծ մարդուն ոտքն ընկած՝ իրենց շնորհակալութեան պաղատախառն ձայ ներն առ ամենակարողն Աստուած կըբարձրացը նէին :



ԵՐԿԱՐԱԿԵՑՈՒԹԻՒՆ .

Շատ ու զանազան փորձերով հաստատուած բան է որ մարդկանց սովորական կեանքը 36 տարի է . իսկ երկարակեաց մարդիկ եօրանասունէն մինչեւ ուրսուն տարի հազիւ կապրին , եւ կանայք երբեմն քիչ մըն այ աւելի . ուստի իննուն տարի ապրողներուն մէջ հարիւր եօրանասունը ուրը կնիկ մարդ՝ հարիւր երիկ մարդ գտնուած է . հարիւր տարի ապրողներուն մէջ հարիւր յիսունընինք կնիկ մարդ՝ հարիւր երիկ մարդ : Բայց զարմանային այս է որ կարգէ դուրս երկայնակեցութիւնները երիկ մարդոց մէջ կըգտնուին :

Սկզբանացի մը , Մաճառ . մը և Ամերիկացի մը 180 տարեկան մեռեր են . Նորվեգիացի մը , Փամայիքացի սև մը 160 տարեկան . Տանիմարքացի մը և ուրիշ քանի մը հոգի 146 տարեկան :

Երոպայի տէրութեանց մէջ ամենամիշտ կերպով կիմացուի մեռած ու ծնած մարդկանց թիւը : Այն հաշիւներով կիմացուի որ 22 նորածին տղոց մէջ մէկը մեռած կըծնի :

Մեռած 1,000 հոգւոյ

224ը առաջին տարուան մէջ կըմեռնին
77ը երկրորդ տարուան մէջ ,
39ը երրորդ տարուան մէջ :

Գումար 337 մեռեալք

Այս ինքն մեռածներուն երրորդ մասէն աւելին կենաց առաջին երեք տարիներուն մէջ են : Մինչեւ հիմա եղած քննութիւններէն կերեւայ որ ամեն տարիքի մէջ նոյնչափ մարդ չմեռնիր . Եւ ընդհանրապէս այս է տարիքներուն հետ մեռնողնե-

րուն համեմատութիւնը . Իսկ իննուուն տարեկան մեռնողներուն թիւը առաջին տարուան մէջ մեռնողներուն կըհամեմատի :

Մարդուս կեանքը շատ աւելի վտանգի մէջ է մայրաքաղաքներն ու քաղաքները քան թէ գիւղաքաղաքներն ու գեղերը . Եւ պատճառն յայտնի է , վասն զի գեղացիք քաղաքացւոց զեխութեանց շատերէն ազատ կըմնան , որ մարդուս կեանքը մաշելով գերեզմանին ճամբան կըկարձեցընեն :

Մեր ընթերցողաց որոշ գաղափար մը տալու համար Գաղղիոյ քաղաքաց ու գիւղից մեռնողներուն համեմատական ցանկը դնենք , որ ամէն տեղի կրնայ յարմարի :

40ին	մէկը	1էն	մինչեւ	2	տարեկան կըմեռնի
60ին	»	7էն	մինչեւ	8	»
147ին	»	13էն	մինչեւ	14	»
100ին	»	19էն	մինչեւ	20	»
40ին	»	20էն	մինչեւ	50	»
10ին	»	50էն	մինչեւ	74	»

Գաղղիոյ հարուստ գաւառներուն մէջ	կըմեռնին , 46ին մէկը .
Աղքատ գաւառներու մէջ	» 33ին մէկը .
Գեղերու մէջ ,	» 40ին մէկը .
Գևդաքաղաքաց մէջ ,	» 33ին մէկը .
Քաղաքաց մէջ ,	» 28ին մէկը .
Մեծ քաղաքաց մէջ ,	» 24ին մէկը .

Հետեւեալ աղիւսակով ալ կիմացուի որ քանի որ ժողովրդեան մը մէջ քաղաքակրրութիւնը ծաղկի , մեռնողներուն թիւն ալ այնչափ կըպակսի , վասն զի քաղաքակրրութեամբ կենաց դիւրութիւնները կըշատնան , եւ կենաց պահպանութեան հարկաւոր եղած հնարքները կիմացուին .

1780ին	մեռեր են ի Գաղղիա	29ին մէկը .
1802ին	»	30ին մէկը .
1820ին	»	39ին մէկը .
1840ին	»	48ին մէկը .
1850ին	»	50ին մէկը .
1854ին	»	51ին մէկը .

Այս ալ ստուգուած է որ ծնանողները մեռնողներէն աւելի են , այնպէս որ հիմակուան դարուս մէջ ժողովրդք պակսելու տեղ կամին կըքազմանան : Եւ որովհետեւ հիմա 25 մեռնողներու տեղ 30 կըծնանին , երէ այսպէս 50 տարի երբայ , աշխարհիս ընակչաց թիւը կըկրկնապատկի :